

## ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐ

**ԲՈՐՉԱՎՈՒԻ ՈՍՑԻԿԱՆԱԿԱՆ ԾՐՉԱՆ**

**ՃՈՒԼԵՎԱԿԻ ՀՅՈՒՄՐԱԿՈՒԹԻՒՆ**

**Շուլավէր.** — Բորչավուի գաւառի կենդրոնական աւանն է, ուր նստում են դաւառապետը, հաշտարար դատատրը, հաշտարար միջնորդը, գաւառի բժիշկը և այլն։ Գտնուում է Թիվիլիս — Կարսեան ել կաթուղու Ծաղա-Սարալ կայարանից փոքր ինչ ցած՝ Ծաղա Սարալ տախտակամածից 8 վերոտ հեռու դէպի արևմուտք, համանուն գետակի վրայ, երեք կողմից ըլուրներով շրջապատուած հովտի մէջ։ Գիւղը բաժանուած է ութ թաղերի, որոնցից իւրաքանչիւրը կրում է այն զիւղի անունը, որտեղից բնակիչները դադթել են 1750—1760 թուականներին. սրանք են. Կորխ, Քամանդար, Մրէջուր, Ղարամուրադ, Ճմեղ, Մելիք-գագա, Աղբալախ, Մմբթլու<sup>1)</sup>)։

Մի երկու կանոննուոր և մնացածը անկանոն փողոցների վրայ շինուած են մեծ մասամբ նոր ձևի և բաւան ճաշակաւոր տներ, որոնցից մի քանիսի առաջ կան պարտէ դներ։ Կան միքանի քաղցրահամ, սառնորակ աղբիւրներ, որոնք բերուած են 8 վերոտ հետառութիւնից դիւղացիների ծախսով և տանուտէր Պառաւեանի ջանքով։ Հայերն ունին երկու եկեղեցի, որոնցից Ա. Աստուածածինը հնաշէն և կիսախարխուլ, իսկ միւսը՝ որ նուիրուած է Ա. Մեսրովի անուան, սրբատաշ քորերով շինուած մի բաւական գեղեցիկ շենք է, որի կաթուղիկէն դեռ ևս չէ կառուցուած։ Ներքուստ ևս գարդարուած չէ։ Եկեղեցու շինութիւնն ոկուել է 1844 թուին և մինչև այժմ շարունակւում է, որտիւնուել շինուում է ժողովրդեան ծախսով։ Եկեղեցու դաւթի հւասարապին կողմում գտնուում է Գայլանէ Պառաւեանի 1893 թ. շինած գեղեցիկ, սրբատաշ, չորս սենեակներից բաղկացած ուսումնաբանական շէնքը, որի հանդէպ, եկեղեցու որմին կից բարձրանում է իւր, Գ. Պառաւեանի մահարձանը (1895 թ.), Գիւղում կայ և մի սինագողաբ։ Գիւղի շուրջը տարածում են 700-ի չափ խաղողի այդիներ։

1) Գտնուում էին Գամշատնի գաւառում։

Ան փոքրիկ բլրակի վրայ, ուր այժմ զտնում է Քալանթարեանների տունը, հին ժամանակներում բարձրանալիս է եղել մի փոքրիկ ամրոց, որ պատկանում էր վրաց թագաժառանգներին։

Բնակիչներից հայերը ջամշատնի զաւառից զաղթականներ են, որոնք ենթարկուել են Մելիք-Սարգսեան և Քալանթարեան տոհմերի մելիքներին, որոնցից Մելիք-Սարգսեան Յովհանջանը և Քալանթարեան Սոսին Բալնիսի ձորում Օքիոդաղի (Հասան Խանի թոռ) դէմ կոռուելով սպանուել են։ 1855 թուին գիւղացիները զանգատուում են Վօրօնցովին մելիքների հարստահարութիւնների մասին և նա հրամայում է տնատեղիները և այգիները գիւղացիներին սեպհականութիւն համարել և միայն արտերից տասանորդ տալ մելիքներին, ինչպէս և կատարում է մինչև այժմ։ Ընդամէնը՝ 607 տուն են. 2242 ար. 1755 իգ. իմիասին՝ 3997 հոգի հայերից կան նաև որպէս ժամանակաւոր ապրողներ ուուներ, հրէաներ և թուրքեր \*):

Այս գիւղիցն է Ռ. Նադիրեանը, որ իւր հաշով 18 տարի շարունակ այս գիւղում ծխական դպրոց է պահել և յայտնի է իւր բարեգործութիւններով։

Ջուլավէրից արևմտա-Հարաւ, մօտ վեց վերստ հեռու, Բնի ձորի անտառապատ լանջին զտնուում է մի հինաւորց վանք, որ շուշավէրցիներին բարտնի է Բեկի ծորի մեծ վանք անունով։ Սա հասարակ քարից շինուած տասն արշ. երկ., 8 արշ. լայնութեան և մօտ 4 սաֆէն բարձրութեան մի եկեղեցի է, տասն սիւնաւոր գեղեցիկ կաթողիկէոլի, որը եկեղեցու ներսից չի երևում, որպէս ետև նրա տակը մի զաղտնի սենեակ է շինուած։ Անի երկու փոքրիկ, երկար և նեղ սլատուհան և մի կամարակապ դուռն, որի վրայ գրուած է. Թվ. Ռ. Ծ. Շիննցաւ ծեռամբ 84.ր 05աննէս թհ։ Սրա երկու կողմք մի քանի փակազրեր։ Վան-

\* ) Բնակիչների թուերը /մ հաւաքած տեղեկութիւնների հիման վրայ են դրուած և վերաբերում են 1901 թուին և մօտաւորապէս միայն ճիշտ են. վիճակազրական բաժնում առաջ կը բերենք 1886 և 1897 թուականների աշխարհագրութեան թուերը։

քը շրջապատուած է կրկնակի պարսպով, որի մէջ կան վեց բուրդ, այժմ կիսաւեր: Կերքին պարսպին կից կան մի քանի կիսաւեր խցեր և ջրի մի աւագանու Եկեղեցու շուրջը և մանաւանդ դռան առաջ կան ահազին մեծութեան դերեղմանաքարեր, մի քանիսի վրայ պատկերներ քանդակուած, միւսներին խաչքար կանդնեցրած: Ալսպէս՝ մի գերեղմանաքարի վրայ նկարուած է չորս մարդու պատկերներ, որոնցից երեքը գիւներին թագեր ունին, իսկ չորրորդը՝ զիխարաց է և ձեռները կրծքին դրած՝ որանց առաջ կանդնած. այս ու այն կողմ դինու գաւեր, բաժակներ, վրացական բաժակեղջիւրներ: Արա վրայ կայ Հետևեալ տապանագիրը.

Այս է իմ կացարան, որ եղեւ տուն իմ բնակարան, նգալ մարսուսիս դամբարան պարոն Ասլամազին:

Արա մօտի տապանաքարի վրայ նկարուած է մի ձիաւոր և գրուած.

Ես ի ասգէն ծովանշեցի, անուն իմ Թամազ կոչի, որ շինեցի սուրբ Եկեղեցիս ի յիշատակի ծնողաց իմոց: Այս երկուսի վրայ թուական չկայ, իսկ որանց մօտի խաչքարը կը- րում է Հետևեալ թուականը և տապանագիրը. Սուրբ խաչու բարեխօս է Քարամին եւ իր կողակցին թ. Ո-ՃՃ.<sup>1)</sup> Պարսպից դուրս ևս մի ուրիշ գերեղմանատուն կայ, մօտը մի զիւղատեղի, այժմ Բնի ծոր անուամբ լալոնի: Այս վանքից դէ- պի արևմտաք, մի վիրստ հեռու, միւս լիռան լանջին դուրն- ւում է մի ուրիշ վանք: Սա անտաշ քարելավ շինուած մի եկե- ղեցի է, որի ձեղունը այժմ արդէն քանդուած է: Մօտը կայ մի սրբատաշ, զեղեցիկ քանդակներով դարդարուած գաւիճ: Մի եղծուած արձանազրութիւնից կարդացում է. Ս. Աս- տուածածին ըարեխոսեա... Ճուլավէրցիք սրան կոչում են Բնի ծորի ներքին վանք: Երկու փոքրիկ, համեմատարար ան- նշան մասուռներ ևս կան զիւղի Հարաւ-արևելեաւն բլրի վրայ, Ս. Սարգիս և Ս. Կիրակի անուններով. ինչպէս և մինը՝ Հա- րաւ-արևելտեան կողմը, Ալաբուակաշէն կոչուած զիւղատեղիկ հանդէպ, բլրի լանջի վրայ: Վերջինիս շուրջը զտնուող գերեզ-

մաններից մինի վրայ դեռ ևս կարդացւում է. Այս է տապան Քիլաւին թուին Ռ.ՇՀԱ, <sup>1)</sup> առ Աստուած փոխեցաւ Գվեղի հիւսիսային կողմը հազիւ երեք վերստ հեռաւորութեամբ մի քարաժայր կայ, որի գաղաթին կան երեք ծակեր, և մօտը՝ մի քանի սենեակներ: Սա երրեմն իրը ըերդ է ծառայել, բայց ալժմ ամուլ կանանց և բորոտ մարդկանց ուխտատեղի է, որովհետեւ առաջիններն անցնում են այդ ծակերով, որպէսզի որդի ունենան, իսկ երկրորդները քսում են իրենց բորոտ մասերի վրայ դրա ստորատում կաթկաթող հանքային ջրից, որ բժըշկուին: Տեղացիները այս նախկին բերդին կոչում են «Ճաւկ բար»:

Փորբ Շուլավէրի. — Կտնւում է Շուլավէրից հինգ վերստ հեռու գէպի հիւսիս և մի փոքրիկ, աննշան զիւղ է, որ մինչեւ անգամ եկեղեցի էլ չունի: Բնակիչները՝ 27 տուն են. 65 ար. 43 իգ. ի միասին՝ 108 հոգի:

Դուդրի. — Աննշան զիւղ է, Շուլավէրից 12 վերստ հեռու, եկեղեցի էլ չունի: Բնակիչները՝ 4 տուն են. 17 ար. 14 իգ. ի միասին՝ 31 հոգի:

## ԼՈՒՌԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԵՐՉԱՆ

### ՃԱՇՆԱՋԱՐԻ ՀԱՄԱՐԾԿՈՒԹԻՒՆ

Շանհազար. — Այս գաւառի հայ կաթոլիկների ամենամեծ գիւղն է, տարածուած մի բնդարձակ գաշտի վրայ: Հեռուն բարձրանում է Մոկրիա կամ Ղարաղաչ լեռները: Գիւղը իւր անունն ստացել է Մելիք Ճահնազարից, որի ամառանոցն (եալլա) է եղել, անցեալ դարի սկզբին: Իսկ թուրքերից կոչուել է Ղոշ-քիլիսա, այստեղ եղած ելկու եկեղեցիների պատճառով: Սրանցից մինը ալժմ վերանորոգուած է և կաթոլիկների ծխական եկեղեցի գարձրած: Նախկին դռան կամարակալքարը վերանորոգուած պատի մէջ է դրուած, որի վրայ Վրաց խուցուրի տառերով կայ մի արձանադրութիւն <sup>2)</sup>: Միւս եկեղեցին մի փոքրիկ, թաղակապ շէնք է, շուրջը գերեղմանա-

<sup>1)</sup> 1682:

<sup>2)</sup> Տես արձանադրութեան բաժնում:

տուն, ուր կան խոյի նմանութեան տապանաքարեր: Այս եկեղեցում ալժմ այլ ևս ժամասացութիւն չի կատարւում: Առաջին եկեղեցու առաջ վագում է մի լորդ աղբաւր, որ շինել է գիւղի հոգեոր Հովիւ հ. Սարգիս վարդապետ Եազրինեանը,—մի բաւական կրթուած անձնաւորութիւն:

Տների մեծ մասը հին ձևի են, շատերը կալմիր քարից շինուած, որի հանքը այստեղ է գտնուում: Կան նաև մի քանի նոր ձևի գեղեցիկ տներ, որոնց մէջ նշանաւոր է հ. Եազրինեանի երկարկանի տունը, բլրի վրայ շինուած: Բնակիչները Ալաշկերտյիներ են, 1818 թուին Աղեքսանդրապօլի զաւառը և ապա, 1822-ին այս տեղ գաղթած: Ընդամենը 170 տուն են. 1007 ար. 900 իգ. իմիասին՝ 1907 հոգի:

Հողը այժմ իրենց, գիւղացիների սեպհականութիւնն է կազմում, որովհետև գնել են կալուածատէրերից:

Ջահնազարի հասարակութեան մէջ և սրա շջակալքում են Մեծ-Ղարաքիլիսա, Փորր-Ղարաքիլիսա, Շիշթափա և Սարշապետ գիւղերը, որոնք գտնուում են կալուածատէրերից: Բոլոր գիւղերումն էլ կան մի-մի եկեղեցի: Բնակիչները միևնույն Ալաշկերտի հայ կաթողիկ \* ) գաղթականներն են, միևնույն ժամանակ եկած: Մեծ-Ղարաքիլիսում ընդամենը 75 տուն են. 440 ար. 364 իգ. ի միասին 80± հոգի. 5 հոգի հայ լուսաւորչական են:

Փոքր-Ղարաքիլիսում՝ 57 տուն. 298 ար. 293 իգ. իմիասին՝ 591 հոգի:

Շիշթափում՝ 50 տուն. 352 ար. 307 իգ. իմիասին 659 հոգի:

Սարշապետում՝ 55 տուն. 340 ար. 284 իգ. իմիասին 624 հոգի:

### ՀԱՅՏԱՐՔԵԿԻ ՀԱՍՈՐԸԿՈՒԹԻՒՆ

Հայտարքէկ. — Ձետեղուած է Լեջան լեռան հանդէպ, արեւմտեան կողմը բարձրացող բլրի լանջին. առջևից անցնում է Պրիվոյնու կամ Միսխանի ջուր գետակը: Ունի մի բաւտկան

\* ) Ուր չենք ցիշել դաւանութիւնը պէտք է հասկանալ լուսաւորչական:

լաւ եկեղեցի, մօտը մի հին աւեր մատուռ, շուրջը գերեզմաններ: Հիւսիսային կողմը, մի ուրիշ բլրի գագաթին կայ մի ուխտատեղի, Ս. Սարգիս անունով:

Բնակիչները՝ 71 տուն են, 376 ար. 372. իմիասին՝ 748 հոգի:

Ուռուտ.—Գտնւում է քլրի ստորոտում, և բաւական դեղցիկ տեսք ունի, որովհետև ոռւսարնակ գիւղերի ազդեցութեան ենթարկութելով փոքր իշատէ միաձնութիւն է ստացել: Տների մեծ մասը նոր ձևի են, կղմինտրի կտուրներով: Մի բարձր թումբի վրայ կանդնած է սրբատաշ, նոր եկեղեցին, որ հին եկեղեցու տեղում նոր են կառուցել, օրինակ վերցնելով Օձունի եկեղեցու ձևից: Կայ և մի ուրիշ եկեղեցու տւերակ: Հաւական է, որ գիւղը խր անունը ստացած լինի այն բազմաթիւ ուռենիներից, որ երբեմն պատում էին համանուն դետակի ափերը:

Բնակիչներից մի քանիսը սերել են այն երկու տուն կարնեցի գաղթականներից, որ այստեղ են վերաբնակուել անցեալ զարի սկզբում: Սրանք մինչև այժմ էլ մասամբ պահպանել են իրենց բատուկ հնչման և բարբառի հետքերը: Ընդամենը՝ 76 տուն են: 369 ար. 361 իգ. ի միասին՝ 730 հոգի:

Ազարակ.—Տարածւում է Լոռու բերդից մօտ երկու վերստ հեռու՝ ընդարձակ դաշտի վրայ: Ունի մի հնաշէն եկեղեցի, որի մօտ կայ մի ուրիշ եկեղեցու տւերակ: Տների մէջ երեսում են բաւականաչափ, կղմինտրով ծածկուած, նոր ձևի բնակարաններ: Գիւղից հազիւ երեք վերստ հեռու, «Աչքուհանք» գետի խոր ձորակում կան բաւականաչափ, մեծ և փոքր քարալրեր, որոնցից մինի մէջ շինուած է մի փոքրիկ մատուռ: Սրա մէջ կայ մի առանձին խորշ, ուր, տանդութեան ասելով, թաղուած է Բաղրամ անունով մի ճղնաւոր: Սրանից փոքր ինչ հեռու կայ մի ուրիշ այլ, մի նոր դռնով: Ասում են, թէ վերոլիշեալ ճղնաւորը ալտանդ է ճղնել, և նոյն իսկ ցոյց են տալիս այն փոսիկները, որ յառաջցել են ճղնաւորի անթիւ ծնրադրութիւններից:

Այս ալրերի մօտից բղխում են երկու սաստիկ լորդ և

սառն աղբիւրներ, որոնք երկու ջրազաց են գարձնում: Ըստմ են, թէ վերպիշեալ ճանաւորի ադօթքով են բղխել այս աղբիւրները:

Այս ձորի ճանապարհը չափազանց դժուարին է: Աւանդութիւնն ասում է, թէ մի մարդ մի ոքազաղ բարձած բարձրանալիս է եղել այս ճանապարհով, և երբ աքաղաղը չի կարողացել ճանապարհը գտնել, բարկացել է վրան ասելով.

«Լուսն ու մութը դիտես, Ըգարակալ մուտը չդիտե՞ս և այս այժմ առած է զարձած:

Բնակլիչները 81 տուն են. 348 ար. 335 իգ. ընդամէնը՝ 683 հոգի. Քահանան՝ Տ. Վերանեան, Ներսիսեան դուրսցն աւարտած է:

Լեջան. — Տեղաւորուած է համանուն լեռան լանջին: Ունի մի հնաշէն եկեղեցի, որի շուրջը կան հին գերեզմաններ: Սրանցից մինի գերեզմանաքարի վրայ քանդակուած է մի մարդ՝ թաղը զլիխին: Գիւղացիների բացատրութեամբ այդ թաղը հարսանեաց թագ է, և որ շատ հին սովորութեամբ, այդ քանդակում է այն երիտասարդների տապանաքարերի վրայ, որոնք հարսանիքից լնտոյ շուտով մեռնում են: Գիւղը բաւականացից տեսք ունի և իրը ամառանոց կարող էր ծառալիք, իթէ շրջակալքում անտառ ունենար: Բնակլիչները՝ 84 տուն են, 342 ար. 343 իգ. ի միասին՝ 700 հոգի:

Լոռու-բերդ. — Զալալ-ողլուց մօտ երեք վերստ հեռու գէպի արևելք, Միսխանա ջուրն ու Դեբեդ գետը երկու խոր ձորակներով միանալով միմեանց հետ կազմում են մի լեզուաձև, ժայռոտ հարթութիւն, որի վրայ գտնուում է նախկին բերդը, իսկ սրա մէջ՝ ալյժմեան զիւղը: Մի քանի հին ձևի շինուած տներ, գտներ, կալեր, մի-երկու ծուռումուր փողոց՝ ահա ամրող զիւղը. իսկ բերդը կընկարագրենք բերդերի բաժնում: Բնակլիչները 25 տուն են, 110 ար. 98 իգ. իմիասին 208 հոգի:

Լոռու բերդի մօտ գտնուում է Ամրակից անունով հին զիւղատեղին, ուր եղել է երկու եկեղեցի: Այժմ այստեղ շինուած է ռուսարնակ նիկոլաևկա զիւղը: Հաւանականօրէն այս հին զիւղը Ամրակից է կոչուել Լոռու բերդին (ամուր) կից լինելու պատճառով:

## ԿՈՒՐԹԱՆԻ ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆ

Կուրթան. — Գտնուում է մի լեզուաձև բարձրաւանդակի վրայ. արևմտեան կողմից հսուելով Պալըդ-չալը և Գարգարալ-ջուրը՝ միանում են արևելեան կողմում տարածուած չնէվանի ձորում: Այսպիսով ձորը շրջապատուած է երեք կողմից ձորերով, որոնց մէջ կան բաւական թուով քարայրեր: Չնէվանի քարայրերից նշանաւոր է Մատուռը, որ ժայռի մէջ փորուած և միայն մի կողմից պատով պատօծ մի փոքրիկ աղօթատեղի է: Դռան մօտ կայ հայերէն եղծուած արձանագրութիւն: Սրանից դէպի արևմտահարաւ ուրիշ այրերի մէջ նշանաւոր է ճրդնաւորի ալրը, որի մօտ, ժայռի մէջ մի կամարակապ խորշ կալ, յստկապէս իրը աղօթատեղի բացուած: Մատուռից դէպի հիւսիս գտնուում են Թուրփոնդաց ալբերը, իսկ նրանից դէպի արևմուտք՝ Սղնախի ալրը, որ ապատանելիս են եղել գիւղի բնակիչները լեզզիների լարձակումների ժամանակ: Պալըդ-չալը աջ կողմը, դոմերի մօտ կան երեք խաչարձան:

Սրանցից մինի վրայ զրուած է.

Ես Ումիկս շինեցի զմատուս, կանգնեցի զիսաշ, հաստատեցի զբեմս եւ թերի զջուրս իմ հալալ վաստակոց, հաւը իմոյ Մխիթարայ, որ Պապ կոչի, եւ Խառութի կնոջ իմ. որ կոչի Տիրամայր. որք կարդաք եւ երկրպագէք, յիշեցէք ի սուրբ յաղալիս ծեր:

Միւս խաչի վրայ.

Ես անարժան ծառայ Աստումոյ Թետրոս ուրդի Բռնաւորի նոր շինեցի զկամուրջս բարեխաւասութիւն ինժ. եւ ծնողաց իմոց. որք կարդաք եւ երկրպագէք, յիշեսջիք յաղալիս:

Գիւղի հիւսիսային կողմում կայ մի հին գերեզմանատուն, ուր մի գեղեցիկ և մեծ խաչարձանի վրայ կարդացւում է. կանգնեցաւ խաչս սուրբ բարեխաւ Վահրամայ ամուսնոյն իւր Ասփէի եւ զաւակաց իւրոց. ամէն: Սրա մօտ կայ մի հասարակ մատուռ: Մի հին անշուք եկեղեցի բարձրանում է գիւղի կետրոնում, ուր այժմ պաշտօն են մատուցանում:

Տները, որոնցից միայն մի քանիսն են նոր ձեւ, անկանոն կերպով ցրուած են, ունենալով իրենց առաջ բանջարանոցներ, ուր առաւելապէս սիտոր է ցանուած: Ամբողջ դաւառի սխտորը զբեթէ այս գիւղն է մատակարարում:

Բնակիչները Պարաբաղից, Երևանից, Ղազախից, Ջերակից և այլ տեղերից են եկած դարիս սկզբում: Ընդամէնը՝ 31 տուն. 687 ար, 551 իր. ի միային՝ 1238 հոգի:

Գիւղի արևմտեան կողմը, զբեթէ կէս վերաս հեռաւորութեան վրայ, Գառդառ-դետի աջ կողմը զտնւում են երկու փոքրիկ մատուռներ, որոնցից մինի վրայ դրուած է. Ջէրոնիմոս, իսկ միւսի մասին աւանդարար պատմւում է, թէ Կողման Գամիանոս ճգնաւորներն են շինել: Սրանց մօտ մի գեղեցիկ խաչքարի վրայ կայ հետեւեալ արձանադրութիւնը.

(Թուին ՇԼԾ \*). ի թագաւորութեան Կիւրիկէի հարազատ Սարգսի Դաւթայ Գաւրգիւրյան նորոգնաւ սուրբ գորգս. բարեխաւ հոգւոց մերոց:

Մորագիւղ. — Այսպէս կոչւում է գիւղը, որովհետև սկզբում եղել է ձորի մէջ, ուր այժմ զտնւում են գիւղի գոյմերը: Ճանապարհների անլարմարութեան և արտերի մեծ մասը ձորից բարձր զտնուելու պատճառով գիւղացիները տեղափոխուել են ձորից վերև, զառիվայրի հիւսիսահայեաց լանջի վրայ: Առաջից, ձորի միջավ անցնում է Պալըխ-չալր: Զօրում, զետի աջ և ձախ կողմերին, բարձր ժայռերի զադաթներին զտնւում են ամրոցների աւերակներ: Աւանդութիւնն ասում է, թէ մի թագաւորի որդին ու աղջիկը փախսել են այստեղ և ընակութիւն հաստատել իւրաքանչիւրը այս բերդերից մինում: Ասում են նաև, թէ շղթալով թասեր են կապուած եղել մի բերդից միսը, քոյլ և եղբայր գինի են ածել թասերը և փոխանակել, միմեանց կենաց խմելով:

Գիւղում կայ մի հասարակ եկեղեցի և երկու ուխտատեղի Ս. Գէորգ և Ս. Սարգսի անուններով: Տներից շատերը գլխատուն են, կիսազետնափոր: Բնակիչները Դսեղ զիւղից եկած

դաղթականներ են, հին Զորագիւղից ալստեղ վերաբնակուած, ընդամէնը՝ 47 տուն. 226 ար. 192 իդ. իմիասին՝ 4.8 հոգի:

Թէպի Ջահալի գիւղը կայ մի աւերակ զիւղատեղի Կուտաստ անունով, համանուն գետակի ափին, ուր կայ մի կիսաւեր մատուռ:

Համուշկուտ.— Գտնում է Խաչի-զիւղից դէպի հարաւ. մի լերան լանջի փոքրիկ հարթութեան վրայ: Փոքրիկ զիւղ է, մի քանի գեղեցիկ տներով և Ս. Կիրակի փոքրիկ մատուռով: Հողն արքունական է: Բնակիչները Ջահալից և Մարցից են գաղթած, ընդամէնը՝ 38 տուն. 180 ար. 153 իդ. իմիասին՝ ՅՅՅ հոգի:

Շահալի.— Զորագետի ձախ կողմումն է գտնում, լեռների գոգաւորութեան մէջ: Գիւղացիներն առում են, թէ այս գիւղի անունը եղել է Ներքին Վահագնի, իսկ որա տրեմտեան կողմում գտնուած աւերակ զիւղատեղին՝ ուր այժմ մնացել է միայն մի գերեզմանատուն, կոչում է Վերի Վահագնի: Գիւղում կայ մի փոքրիկ, հասարակ եկեղեցի, մօտք մի հին, մեծ խաչքար, և մի մատուռ սուրբ Սարգիս անունով, ուր ուխտ են գալիս Ծագուտըները, առանց հարսնացուի, դաւուլ գուռնի առաջնորդութեամբ և. հարսնեորների ուղեկցութեամբ:

Տների մեծ մասը զվաստներ են, միայն շատերն ունին նաև մի, կամ միքանի կանոնաւոր սենեակ: Մի քանի տների առաջ էլ պարտէզներ կան: Գիւղում կայ երկու խանութ, իսկ ձորում, գետի աջ ափին մի փայտ սղոցելու գործարան:

Գիւղի տեսարանը գեղեցիկ, կլիման էլ մեղմ լինելու պատճառով՝ այստեղ ևս սկսել են ամարանոց դալ:

Բնակիչները գաղթած են ալստեղ Ղաղախի Ըսաջրից, Կարսից, Դսեղից և Օձունից. ընդամէնը՝ 78 տուն են. 381 ար. 326 իդ. ի միասին 707 հոգի:

Այս զիւղացիները բացի սովորական՝ երկրագործութիւն ու անասնապահութիւն՝ պարապմունքից, Ներսիսեան դպրոցն աւարտած երկու երիտասարդների նախաձեռնութեամբ պարապում են նաև երսպական ձևի մեղուապահութեամբ:

Այս և Կուրթան զիւղերի մէջ տեղում, ճանապարհից փոքր

ինչ հեռու գտնուում է մի աւերակ զիւղատեղի, որ Համի է կուլում: Աւանդարար պատմում է, թէ այդ տեղի նախկին ընակիցները Անիից են գաղթել այդտեղ:

### ՄՂԱՐԹԻ ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆ

**Մղարթ.** — Դունուում է Համանուն լերան ստորոտում, առջևում տարածւում են ընդարձակ դաշտեր, որ ամենաքերքին են համարում: Դիւղում կալ մի փոքրիկ եկեղեցի: Հողը արքունական է: Բնակիչները գաղթել են Օձունից. ընդամենը՝ 40 տուն են, 182 ար. 155 իգ. ի միասին՝ 337 հողի:

Յովհաննածոր կամ *Oվանդարա*. — Մի փոքրիկ, աննշան զիւղ է մի քարաժարակ լանջին շինուած, որ երբեմն իր եալլա էր ծառայում Օձնեցիներին: Ունին մի փոքրիկ, աննշան եկեղեցի: Արքան դրախէ է ամառը իւր օդով, ջրով և տեսարաններով, նոյնքոն անսուանելի ձմեռը, իւր ցրտով, բքով և անանցանելի ճանապարհներով: Բնակիչները 26 տուն են. 160 ար. 124 իգ. ի միասին՝ 284 հողի:

Յովհաննածորից փոքր ինչ հեռու, կողէս յունարնակ զիւղի հիւսիսալիին կողմը, զիւղից մոտ 40 սաժէն հեռու, մի փոքրիկ ձորակի մէջ, հալիկական մի հին զերեզմանատուն կալ, ուր դունում է ի միջի ալլոց և Գրիգոր եպիսկոպոս Տուտէ — որդու հօր՝ Տուտէ իշխանի դամբարանը: Այս իշխանի սերունդը յայտնի չէ թէ որ ժամանակից ի վեր իշխել է այս կողմերում և ունեցել է սեպհական կալուածներ, յայտնի է միայն, որ Տուտէ իշխանի միւս որդին՝ Տուտիկ իշխանը մեծ համարումն է վայելել ամբողջ Լոռում, և նրա անուամբ կոչուել են թէ Կողէսի մօտի վտակը և թէ նրա շրջակալքը՝ Տուտիկաջուր: Այժմ այս կալուածքը պատկանում է Լոռիս Մելիքեանին, իսկ Կողէսը թագաւորական է: Այս իշխանական ցեղի մասին, բացի վերովիշեալ կցկուուր տեղեկութիւնը, ուրիշ ոչինչ յայտնի չէ: Տուտէ իշխանի տոհմական դամբարանը նիրկաբացնում է  $3\frac{1}{2}$  արշ. երկարութեան,  $1\frac{1}{2}$  արշ. լայնութեան և  $2\frac{1}{2}$  արշ. բարձրութեան մի կամարակապ դեմնայարկ, մի փոքրիկ դռնով արևմտեան կողմը: Աս այժմ տեղ

տեղ և մանաւանդ գուան կողմը, քանդուած է և բաց: Այս զետնայարկի գլխին, արևելեան կողմը, սրբատաշ քարերից մի պատուանդան է շինուած, մօտ երկու սաժէն երկարութեան, 1<sup>1/2</sup> արշ. լայնութեան և 2 արշ. բարձրութեան: Սրա վրայ քառակուսի քարէ պատուանդանների վրայ կանդնած են երեք խաչքարեր, որոնցից միջինը աւելի մեծ և նրբաքանդակ է: Պատուանդանի վրայ կայ հետեւեալ տապանազիրը.

Կամաւն բարերարին Աստուծոյ ես Տուտիկս և մալլն իմ Թամար և ամուսինն իմ Դիդկայ կանգնեցաք զերրորդութիւնն վասն Աստիճի և Քամիթարայ և Նորադինին, որք անհետ կորեան ի ձեռս անարինաց և սուդ մեծ և անմխիթար թողին մեղ. որք երկրպագէք լիշեցէք զյեղ և դժնաւզս մեր թուին ՊՊ-ին \*):

*Թօլլագիրան.*—Մի փոքրիկ զիւղ է Համանուն կայարանի մօտ, ուր նշանաւոր է միայն քարաշէն, փայտածածկ եկեղեցին: Բնակիչներն ընդամէնը՝ 27 տուն են. 151 ար. 127 իգ. ի միասին՝ 278 հողի:

*Հազուի.*—Մի փոքրիկ զիւղ է, Աքորիկց Յ վեշտ հեռու, քարափափի վրայ: Ունի մի հին քարաշէն, սաղաշէն մատուռ, որ այժմ իբր ծխական եկեղեցի է ծառայում: Բնակիչները 24 տուն են՝ 108 ար. 94 իգ. ի միասին՝ 202 հողի:

*Ամոծ.*—Յձունից Հազիւ մի վերստ հեռաւորութեամբ դէպի արեւմտահիւսիս, մի լանջի վրայ, եր՞ք կողմից անտառապատ լեռներով պատած: Պատկանում է Կոմս Լուիս Մելիքեանին և աղնուական Բաշրէօխւկ-Մելիքեաններին: Ունի մի փոքրիկ, հասարակ եկեղեցի, ուր անհրաժեշտ դէպքերում միայն քահանայագործում է Յձունի քահանաներից մինը: Մաքուր ջրի աղբիւրը զիւղից փոքր ինչ հեռու է գտնուում, իսկ զիւղի միջով հոսող աղբիւրը կեղտոտ է: Գիւղի զիրքը և նրա առաջ բացուղ տեսարանը շատ գեղեցիկ են, օդը գովարար, անտառը շատ մօտիկ, այնպէս որ մի լաւ ամարանոցի յարմարութիւններն ունի: Կան նաև մի քանի զեղեցիկ, փոքրի շատէ յարւ մարաւոր տներ, որ վարձով են տրւում ամարանոց եկողներին:

\*.) 1241.

Դիւղում ոչ մի խանութ չկայ, բնակիչները բոլորն էլ հաւեր են, ընդամենը՝ 11 տուն. 60 ար. 51 իգ. իմիասին 111 հոգի:

Դիւղի հիւտիացին կողմում, մի փոքրիկ ըլրակի վրայ կայ մի ուխտատեղի Ս. Յակոբ անունով:

Ամոճից մինչև Աստանին կայարանը նորերս շինուած է սայի ճանապարհ:

Նոր կամ ներքին Ռոզունդար կամ Զաշաղան. — Ֆաթերից չորս վերստ հեռու, նոյն դաշտավայրի վրայ, ձորի ափին: Ունին մի փոքրիկ, քարաշէն եկեղեցի: Գիւղի մէջ աղքար չկայ, գեղջկուհիները մեծ նեղութիւններով ջուր են կրում մօտակայ ձորում դժոնուած միակ աղքիւրից: Հողն արքունական է: Բնակիչներն ընդամենը՝ 37 տուն. 181 ար. 162 իգ. ի միասին՝ 343 հոգի:

Գիւղից դէպի արևմուտք, Զորագետի ձախ ափին, մի բարձր լեռան վրայ կայ մի քարաշէն բուրդ, ուր առաջները շատ անդամ շրջակայ դիւղերի բնակիչները պաշտպանուել են առավատակութիւններից:

Իգահատ կամ Այգեհատ. — Գտնուում է Օձունի հարթութեան հարաւային մասում, ձորի ափին: Գիւղը իւր անունն ստացել է այն հանդամանքից, որ ամստեղ ալդիները հատնում են, արսինքն նրանից հարաւ այլ ևս արդիներ չկան: Գիւղի մէջ կայ մի հասարակ եկեղեցի. տներից շատերը մի կամ երկրարկանի են, բաւական մաքուր և գեղեցիկ շինուած, որոնցից շատերի առաջ կան պարտէզներ:

Բնակիչներն բոլորն էլ ձահկվերդեան տոհմից են, ազնուականներ, ուստի և զիւղն Արդուի և Ամոճի պէս հասարակական բացառիկ գիրք ունի: Նա չունի ոչ տանուտէր և ոչ գիւղական դատաւոր, այլ անմիջապէս ենթարկուում է դաւառապետին և հաշտարար դատաւորին: Բնակիչների թիւը ընդամենը՝ 4) տուն է, 127 ար. 167 իգ. ի միասին 364 հոգի:

Հողերը պատկանում են իրենց գիւղացիներին, որոնք կամ անձամբ և կամ վարձկան մշակների ձեռքով են մշակում:

Գիւղացիները ջրի շատ նեղութիւն են կրում, որովհետև միայն մի աղքարիւր կայ, այն էլ գիւղից դուրս, միքիչ հեռու:

Խգատակ աւերակ. — Բաբաջան զետակի ձորում կան քսանից աւելի աւերակ զեւդատեղեր, որոնցից մինի իդատակի՝ աւերակ եկեղեցու վրայ կայ մի արձանագրութիւն<sup>1)</sup>:

Գիւղատեղերից մի քանի վերստ հեռու, անտառապատ ըլրի վրայ, կան երկու գերեզման, որոնցից մինի կործանուած պատուանդանի վրայ կայ մի եղծուած տապանագիր:

Արդուի. — Տարածում է զէկաղըրիւր, Տոտկաջուր (Տուտիկ իշխանի ջուր) լեռների փեշերի վրայ, հիւսիսային կողմում բարձրանում են Դնկոյա-դլուխ, Միլի-ակ գագաթները, Հարաւային կողմում չողոմսի գագաթը, որի առաջ գտնուում է համանուն աւերակ զիւղատեղին<sup>2)</sup>: Արևելեան կողմը Օձունի հարթ տարածութիւնն է:

Աւանդութեան ասելով սա երբեմն քաղաք է եղել, և յիրաւի, երեք աւերակ եկեղեցիներ, վեց գերեզմանատուն, երեք ձիթեհանք, բազմաթիւ տների հետքեր հաստատում են այդ աւանդութիւնը: Գիւղը բաժանում է Յ թաղի՝ Վիշապաձոր, Տայինանց թաղ և Քալանթարեան թաղ: Ալմեեան սների մեծագոյն մասը գեղեցիկ են, կղմինտրածածկ կտուրով և պարտէզներով շրջապատուած:

Գիւղը պատկանում է Լօրիս-Միլիքիաններին և աղնուական Քալանթարեաններին: Բնակիչները 18 տուն են, որոնցից 8 միայն Քալանթարեաններից, 93 ար. 81 իդ. ի միամին՝ 174 հոգի:

Այս գիւղը ևս, որպէս ազնուականների բնակավայր, չունի ոչ տանուտէր և ոչ գիւղական դատարան:

Վիշապաձորի մօտ գտնուում է Օհան Օձնեցու վանքը<sup>3)</sup>:

### ՈՒԶՈՒՆԼԱՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Օծուն կամ Ռւզունլար. Սա գտնուում է երկաթուղու Սանահին կայարանի զրեթէ հանդէպ, ձորի աջ, արևմտեան ափին տարածուող բարձրաւանդակի վրայ: Գիւղի արևմտեան

<sup>1)</sup> Տես արձանագրութիւնների բաժնում.

<sup>2)</sup> Եւանդութեան ասելով գիւղը այդ անունը ստացել է այդտեղ բնակուող չողոմսի քաջ կնոջ անունից:

<sup>3)</sup> Օհան Օձնեցու վանքի և Վիշապաձորի մասին տես նշանաւոր վանքերի բաժնում:



Мон. Сананиъ.

Սանահինի վանք.

*Mon. de Sanahine.*

ծալրում բարձրանում է 0հան 0ձնեցու շինած գեղեցիկ, քարաշէն եկեղեցին, որի հիւսիսային կողմը առանձնակի կանգնած է մի հրաշալի մահարձան, որ աւանդաբար մերազրւում է Սմբատ թագաւորին<sup>1)</sup>:

Եկեղեցու շուրջը կայ մի ընդարձակ գերեզմանատուն, գեղեցիկ խաչքարերով: Մի ուրիշ գերեզմանատուն ևս ընկած է գիւղի արևելահիւսիսային ծալրը:

Դիւղի արևելեան ծալրում, ձերի գլխին եղել է մի ամբոց, որի միակ եկեղեցու աւելք ակներն են մնացել այժմ, որովհետև զիւղացիները բոլոր քարերը քանդել և տարել են: Այս եկեղեցին այժմ կոչւում է Խաղկելվանք, և ծաղիկ հիւանդութիւն ունեցաղների համար ուխտատեղի է: Արան կից ուխտատեղին էլ բարտնի է ո. Կիրակի անունով:

Դիւղի փողոցներից մի քանիսը լայն են և կանոնաւոր, միւսները՝ նեղ և ծուռնումուռ:

Տների մեծ մասը դեռ ևս հին ձեւի են, կիսաղետնավոր, միւսները՝ նոր ձեւի, կղմինտորներով ծածկուած կտուրներով. մի երկու տուն էլ երկյարկանի: Մի քանիսի առաջ պարտէ դներ կան, միւսների՝ լոկ միայն մի քանի ծառեր տնկած:

Հինգ խանութ, մի քանի գարբնի, պայտառի, ներկարի արհեստանոց ցրուած են զիւղի դանաղան կողիներում:

Դիւղը վայելում է այն սառնորակ և քաղցրահամ աղբիւրի ջուրը, որ բերել է Զաքարէ սպասալարի իշխան Պանպարէն, նրա մօտ հիւանդանոց շինելով, ուր օդի և ջրի մաքրութիւնից շատ հիւանդաներ առողջացել են, ուստի և ջուրը կոչուել է կենդանարար, իսկ այժմ Կնդանարար:

Դիւղում կայ ուսւաց երկդասեան դպրոց, որը սակայն դեռ ևս դպրոցական շէնք չունի:

Բնակիչները բնիկներ և մի քանի տուն Գիւլիստանից Մելք Փրիդոնի հետ դաղթած դարաբաղցիներ են. ընդամենը 318 տուն. 1686 ար. 1379 իդ. միասին՝ 3065 հոգի:

<sup>1)</sup> Թէ վանքի և թէ մահարձանի նկարագրութիւնը տես «Նըշանաւոր վանքեր»-ի բաժնում:

## ՀԱՂԲԸՏԻ ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆ

**Հաղբատ.** Գտնուում է Թերեդ գետի աջ ափին, մի զառիվայրի վրայ, որի արևելեան և հարաւային կողմերում բարձրանում են ջերունական և Սուրբ Լուսի անտառապատ լեռներն ու մի քանի ժայռոտ ըլուրներ, իսկ արևմուտքից և հիսախսից ահագին ժայռոտ ձորն անմատչելի է դարձնում նրան։ Վլիման բարեխառն է, չուրը յստակ և սառն, այնպէս որ իրը հիանալի ամարանոց կարող է դառնալ, եթէ կառքի ճանապարհ շինուի մինչև երկաթուղու կայարանը։ Գիւղը վերին աստիճանի տիսուր տպաւորութիւն է թողնում, որովհետև տների մեծագոյն մասը հին ձևի են, կիսագետնափոր, փողոցներն անկանոն, բնակիչներն աղքատ և հաբկերի տակ ճնշուած, որովհետև գիւղի հողերը ոչ թէ արքունական են, այլ պատկանում են իշխան Բարատովին, որ թերքի  $\frac{1}{3}$  ինքն է վերցնում։ Ելապիսի ծանր տուքքի են ենթարկուած այն դիպերը, որոնք մի որև է իշխանական տան են պատկանում։

Գիւղը ծխական եկեղեցի չունի, այլ օգտաւում է իրեն մօտ գտնուած Հաղբատի հռչակաւոր վանքից, պահելով միայն մի ծխական քահանայ, որ ապրում է գիւղում։

Ճրջակայ Հաղբատաձորն ու ներդաձորը լի են խաղողի և մրգատու ծտոերի ալղիներով։

Բնակիչները քաջ և լաւ հրացանաձիգներ են. նոյն իսկ կանայք զիտեն հրացան արձակել։ Ընդամէնը 80 տուն են. 407 ար. 321 իզ. ի միասին՝ 728 հոգի։

**Սանահին.**—Մի փոքր գիւղ է համանուն հռչակաւոր վանքի մօտ։ Հողի մեծագոյն մասը պատկանում է Արդութեան Երկայնարազուկ տոհմին և մի եօթերորդը՝ վանքին։ Գիւղում բնակում են Արդութեան տոհմից մի քանի գիւղացի զերդատաններ։ Տների մեծագոյն մասը հին ձևի են, փողոցներն անկանոն, կեղտոտ։ Ֆլական եկեղեցի չունին, այլ օգտաւում են վանքից, պահելով իրենց մօտ մի ծխական քահանայ։ Ընդհանրապէս կլիման, հիանալի ջուրը, տեղի դիբքը և մաքուր օդը բնակիչներին շատ լաւ կազմուածք են շնորհել և սրանք,

յանաւանդ կանալք, յալտնի են ամբողջ դաւառում որպէս գեղցիկներ։ Սրանք նաև քաջ և լաւ հրացանաձիգներ են. նոյն իսկ ևանալք զիտեն հրացան արձակել և սրանցից մինը, թամագանց մալրը, հրացանն ուսին միայնակ սղահպանել է իրենց անասունները եալլայում։

Բայց Ըրդութեան Երկանաբազուկ տոհմի նշանաւոր մարդկանցից, զիւղը տուել է նաև մի ականաւոր հնախողպ—պատմաբան—Ըղէքսանողը Երիցեան։

Բնակիչները ընկիններ են. 80 տուն. 435 ար. 380 իդ. ի միասին՝ 815 հոդի։

Արորի. —Գտնւում է Լալվար լեռան սրեկակողմը, առջևից անցնում է Դեբեգ գետը։ Դիւզում կալ մի փոքրիկ, սազաշէն եկեղեցի. որ առաջ մատուռ է եղել։ Որա հարաւային կողմում կալ մի հացատնից և հօթը սենեակներից բաղկացած մի տան աւերակ, որ յարտնի է «եօթն աղբար տուն» անունով։ Դիւզացիները պատմում են, թէ այդ տեղ ընակուել ան եօթն եղբայրներ, որոնք այնքան հարուստ են եղել, որ բազմաթիւ կոլիբրն ու ոչխարները կթել են տուել Լալվար լեռան վրայ և այնուղից խողովակներով զիւղը բերել։ Դիւղի հարաւ—արեկիան կողմում, հազիւ չորս վերստ հեռու, ձորում, կալ մի հին, սըրբատաշ քարով շինուած, գեղեցիկ վանք։

Ալորի զիւղը կալուածք է կոմս Լոլիս-Մելիքեանների։

Բնակիչները դալթել են Պազախի կողմերից. ընդամէնը՝ 51 տուն են. 321 ար. 303 իդ. միասին՝ 694 հոդի։

Որնակ. —Սանահնի և չաղրատի մէջ, սռոջնից հազիւ երեք վերստ հեռաւորութեամբ, երկու անտառապատ լեռների առաջ, ձորից փոքր ինչ բարձր։ Պատկանում է Արդութեաններին, Լորիս-Մելիքեաններին և մասամբ Սանահնի վանքին։ Դիւղն ունի մի քարաշէն, փոքրիկ և անշուք եկեղեցի, որ կառուցել է իշխ. Քալի Արդութեանը։

Դիւղի հարաւ—արեկմտեան ծալրում գտնւում է մի աղրիս, որ շինել է Թոլֆլիսի կոսանաց անապատի միաբան բարեկրօն կոչ Մանի Լոլիս-Մելիքեան, որի պատկերը, շինութեան վե-

բարերեալ արձանագրութեամբ, վակցբած է աղբիւրի կամտրակալ ճակատին:

Այլ ևս աղբիւրը չի վազում:

Բնակիչները 26 տուն են. 175 ար. 132 իդ. իմիսին՝ 307 հոգի:


### ԴՍԵՂԻ ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆ.

Դշեղ. — Ընկնում է այն բարձրաւանդակի վրայ, որ տարածւում է Դեբեդ ղետի երկու մեծ ճիւղերի միախառ ման աջ կողմք: Երեք կաղմից պատած է խոր ձորերով, իսկ հարաւային կողմում բարձրանում է Տղրկածովի զլուխ, Սարի գլուխ և Քերթաղ բլրակների շարքը: Առաջին բլուրի վրայ կայ մի փոքրիկ լճակ, տղրակներով (սիլուել) լի, որի պատճառով և լիճ Տղրկածով, իսկ բլուրը՝ Տղրկածովի զլուխ է կոչում, իսկ վերջինի վրայ երևում են հին բերդի հետքեր: Գիւղի արևելեան կողմում բարձրանում է մի ուրիշ բլրակ, Գիւտ անոնսով<sup>1)</sup>:

Գիւղում կան մի քանի լայն, բայց ոչ մի կանոնաւոր փողոց. տների մեծ մասը հին ձևի, զլխատներ են, իսկ փոքր մասը՝ նոր ձևի, կղմինտրածածկ կտուքներով: Գիւղի հիւսիսային կողմում գտնում է եկեղեցին, որ բաւական լաւ շենք է, մեծ մասը նորողած: Զանգակատան մասը հին է, և սրբ վրայ դեռ ևս մնում է Պամիկոնեան տունի դրոշանիշը, երկողինեան արծիւ՝ ճանկիւրում գառն րռնած: Գիւղի զրեթէ կետրոնում գտնում է մի հին գերեզմանատուն, ուր բազմաթիւ տապանաքարերի մէջ նշանաւոր է մի կոթող և մի խաչարձան: Կոթողը քառանկիւնի է, 2 սաժէն բարձրութեամբ, չորս երեսն էլ քանդակներով զարդարուած, որի պատուանդանի վրայ հազիւ հազ կարդացւում է. Ես Վահրամ զաւտար շինար քաննեկ թողի վկայ ապնայն հագկայ խորիշան ով խափանէ յժը հայրապետաց նզովնսցի Ցէր Աստուած ողորմի մխիթարչին:

Խաչարձանը կանգնած է երեք մեծ քարից կաղմած պատ-

<sup>1)</sup> Սա թերեւ գիւտանոց եղած լինի, որից և ստացած իւր անունը:



Могильный памятникъ въ Дсевѣ. Մահաբան Գևեղում. Monument funéraire à Dsegh.

ուանդանի վրայ, և ճակատին ունի մի առանձին քար, որ փոքր ինչ խոնարհեցրած է, թերեւս անձրևից պահպանելու համար: Այս քարի վրայ քանդակուած է Փրկիչը նստած դիբքալ, աջ ձեռքը բարձրացրած, իսկ ձախ ձեռքին բռնած մադաղաթ՝ վրան զրած: «Ես եմ լոյս աշխարհի», շուրջը ալ սպատիկերներ: Խաչքարի վրայ քանդակուած է Յիսուսը՝ խաչած: Խաչի դիմուն զրած է: «Սա է թագաւոր հրէից», աջ կողմից կայ մի աջ և մի աղաւնի, շուրջը՝ «Աջ տեսոն եւ հոգի Աստուծոյց: Նորա խաչեալ Յիսուսի մի ձեռից մինչև միսր՝ խաչի վրայ դրուած է: «Ձեռք, որ զերկինս արարին՝ տարածեցան ի խաչիս:» Խաչի մի կողմը կանդնած են Յովհաննէս և Նիկոդիմոս, միւս կողմն Աստուածածին և Յովսէփ, ձեռին կտաւ, խաչի ներքեւ զլուխն «Աղամի»: Իսկ պատուանդանի վրայ կայ հետևեալ արձանադրութիւնը.

Ի թվ. 21. Ողորմութեամբ Աստուծոյ, ես Տէրունս որդի Խալլըին իմ աղքէրացովս կանգնեցի զիսէչս յանուն Դրիգորոյ որ զուր եւ դառն մահուամբ ի Քրիստոս փոխեցաւ որ է պարծանաց եւ զմարդոյ եղբայր մեր որք երկրպագէք յաղալիս յիշեցէք: Պատուանդանի ձախ երեւին. Վարհամ յիշեցէք<sup>1)</sup>:

Դիւղացիները ալս երկու զերեղմանները համարում են քոյլ և եղրօր, մինին Աստուածածին, միւսին Լուսաւորիչ անտանելով<sup>2)</sup>:

Դիւղի մէջ և շրջակայքում յաճախս Հնութիւններ են զըտնուոմ: Այսպէս մի դիւղացի տան տեղ փորելու ժամանակ բացեց մի ընդարձակ յատակ, կարմը ներկած աղիւսներով սայայատակած: Սրա մի կողմը կար մի փոքրիկ տաշտածև, քարէ աւաղան, իսկ մէջ տեղը մի աղիւս, զծերով չորս մաս բաժանուած և իւրաքանչիւր մասում նկատելի էր մի կնիք և մի տառ: Դիւղացիներն այդ տեղին «Թագաւորի սղջկայ բաղնիս» են անուանում<sup>3)</sup>:

<sup>1)</sup> Նոր Թար. 1887. № 136.

<sup>2)</sup> Ըստ աւանդութիւնը առաջ կրթերենք Շահնդութիւնների բաժնուում:

<sup>3)</sup> Անդ.

Բնակիչները բնիկներ են և յալտնի են դաւառում որպէս քաջ մարդիկ։ Ալստեղից է բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը։ Ընդամէնը 110 տուն են. 541 ար. 450 իդ. ի միասին՝ 991 հոգի։

Գիւղի մօտ գտնում է Ս. Գրիգորի և Քառասնից վանքերը, ինչպէս և Սիրուն խաչը<sup>1)</sup>։

*Մարց.* — Գտնում է մի բլրակի վրայ, որի արևմտեան կողմից տարածում է Բարաջանայ ձորակը՝ Բարաջանայ ջրով. արևելքից արևմուտք էլ մի ուրիշ ձորակէ ձգւում մի բարակ առուակով։ Հարաւ-արևմտեան կողմում բարձրանում է Սոթի լեռը, ուր կայ մի գիւղատեղի, մի փոքրիկ, աւերակ մատուռ, շուրջը զերեղմաններով պատաժ։ Հարաւ-արևելեան կողմում ձգւում է Շգնաւորի-թալա բարձրաւանդակը, ուր կայ «Շգնաւորի խաչ» ուխտատեղին։ Հեռու, արևելեան կողմում երեւում է Չաթինդաղը. հլուսալին կողմում ձորակէ, մի առուակով։

Տներից շատերը գետնափոր են, զլիստուն, և միայն միքանիսը նոր ձեւի։

Բնակիչները դաշտականներ են զամշագնից և Ջրարեղից։ Ընդամէնը՝ 50 տուն են. 245 ար. 209 իդ. ի միասին 454 հոգի։ Ըլտեղի կանալք շալ են գործում, մինչեւ միւս գիւղերում չեն գործում։ Արանք բաւականաչափ անփոփոխ պահպաննել են իրենց մայրենի բարբառը. դպրոց երբէք չեն ունեցել։

Մարց գիւղից փոքրինչ բարձր գտնում է մի հանգստարան, ուր մի խաչքարի վրայ կարդացում է։

Թուին ԶԼԴ. Կանգնեցաւ Խաչս ի նեղ եւ ի դառն ժամանակս թաթարաց ի թագաւորութեան Դիմետրի որդույ Դաւթի ի հայրապետութեան տէր Յաւնաննէսի թոռն Դաւթեանց. եւ . Թաւմայ քահանայ եւ եղբայրն իմ Տիրացու կանգնեցաք գիւաշ ամենափրկիչ, յիշատակ հար մերոյ Գրիգորի քահանային եւ մար մերոյ Թիւրանուշային եւ քունքը մերոց Տերանց Տիւ ամաքին եւ Տիրոցին. եւ վեստայից մերոց անպատճառ քահանայից Խաչատուրին

<sup>1)</sup> Տես վանքերի բաժնում։

եւ Մարզարին. ով ապտուտծասէրթ, որը երկրպագէթ զհանգուցեալրս յիշեցէթ ի Քրիստոս:

Լոռուտ. — Մարզից հինգ վերստ հեռաւորութեամբ, լեռան լանջին. ունին մի փոքրիկ եկեղեցի. 0հան 0ձնեցու վանքի կալուածք է համարւում: Բնակիչներն ընդամէնը 107 տուն են. 671 ար. 537 իդ. ի միասին՝ 1205 հոգի: Բոլորն էլ 1860 թուն են գաղթել այսուեղ Ղաղախի Ղալաշալ գիւղից:

ԱՇԽՈՂԱՐ. — Այս փոքրիկ դիւղը իւր անունն ստացել է իւր մօտ գտնուած ուխտատեղիլ անունից, որ մի հասարակ մասուու է և կուռում է ԱՇԽՈՂՈՐԱՎԱՐԻ Գիւղում կայ մի փոքրիկ, հասարակ եկեղեցի: Բնակիչները՝ 18 տուն են. 101 ար. 69 իդ. ի միասին՝ 170 հոգի:

ԱԹԱՆ. — Լոռուտից 4 վերստ. ունին մի փոքրիկ, հնացէն եկեղեցի: Այս դիւղը ևս 0ձունի վանքին է պատկանում: Բնակիչները Հաղբատից են եկել, մի քանիսն էլ զերակի գաւառից. ընդամէնը՝ 18 տուն են. 116 ար. 97 իդ. ի միասին՝ 213 հոգի:

ԽԱՋԻ գիւղ. — Դունւում է Ալերեքսի զետի երկու ափին, համանուն ձորի մէջ: Գիւղն իւր անունն ստացել է այն բարձըր խաչ-քարից, որ գտնուում է զիւղի արևելեան կողմում: Արտօել կայ մի փոքրիկ, նոր շինուած եկեղեցի, մի քանի քարաշէն, զեղեցիկ տներ, խոլ միւսները՝ գլխատներ են: Բնակիչները գաղթած են Մարց գիւղից. ընդամէնը՝ 43 տուն են. 258 ար. 225 իդ. ի միասին՝ 473 հոգի: Հողը արքունական է:

ՔԱՐԻԿԻՆ. — Սա իւր անունը հաւանականօրէն ստացել է շուրջը գտնուած ահազին քարտայուերից և քարտկոյտերից. տեղաւորուած է մի ըլլի վրայ. ունի մի քարաշէն փոքրիկ եկեղեցի: Բնակիչները գաղթել են Մարց գիւղից, որից այս զիւղը բաժանուած է մի ձորով և հազիւ երեք վերստ հեռու լինի: Ընդամէնը՝ 40 տուն են. 226 ար. 187 իդ. ի միասին՝ 413 հոգի:

ՃԱՂԹԵՐ. — Մի փոքրիկ զիւղ է, Մզարթից վեց վերստ հեռաւորութեամբ, ձորի ափին: Ունին մի փոքրիկ, փալտածածկ եկեղեցի, որին հարաւալին կողմից կից է մի փոքրիկ խոտ-

րան, պատարագամատոլց սեղանով։ Սա մի առանձին ուխտատեղի է համարում։ Բնակիչները ընդամէնը՝ 25 տուն ևն, 146 ար. 106 իդ. ի միասին՝ 225 հոգի։

*Մաղիբազողի.* — Մի փոքրիկ գիւղ է Գոսեղից Յ վերստ Հեռու, ունի մի քարաշէն, գեղեցիկ եկեղեցի։ Բնակիչները ծաթեր գիւղից են եկել. ընդամէնը՝ 19 տուն են. 132 ար. 121 իդ. ի միասին 253 հոգի։

### ԳԻՒԼԱՔՈՐԾՎԿԻ ՀԱՍՏՐՈԿՈՒԹԻՒՆ

*Գիւլաքարակ.* — Ընկած է այն ընդարձակ հովտի մէջ, ուր տեղաւորուած են նաև Վարդարյուր, Հոբարձի և Գեառզեառ գիւղերը։

Այստեղ կան մի քանի կանոնաւոր փողոցներ, տների մեծ մասը նոր ձեւի են, եկեղեցին բաւական գեղեցիկ է, թաղակապ և չորս սիւների վրայ հաստատուած։ Գիւղի հարաւային կողմում բարձրանում է Տզովդալ կամ Գուալ լեռաւը, որ բաժանում է Լոռին Փամբակից։ Այս լեռան մի ճիւղի ստորտում կայ մի աւերակ գիւղատեղի, որտեղից մի անցք տանում է դէպի Տզովդալ և կոչում է Արմակայ գուռ։ Այստեղ հարց է ծագում, թէ արդեօք այդ լեռան հին հայկական անունը Արմակ չէ եղել<sup>1)</sup>։

Սրա, ինչպէս և վերոյիշեալ և Կուրթան գիւղերի բնակիչները զաղթել են Փամբակի գաւառից 1818 թուին։ Ընդամէնը՝ 118 տուն են. 635 ար. 546 իդ. իմիասին 1181 հոգի։

*Վարդարյուր.* — Տարածուած է Գառ-գառ դետի աջ ավիին, ո. Սարգիս սարի հիւսիս-արեւմտեան լանջի վրայ։ Կենտրոնում զտնում է սրբատաշ քարից նոր շինուած սաղաշէն եկեղեցին, որի մօտ սփռուած է հին գերեզմանատունը խաչքարերով զարդարուած։ Սրա մօտ զտնում է մի մատուռ, ո. Խաչ անունով, ուր ուխտ է գնում միմիայն իդական սեռը։

Կանոնաւոր փողոցներ չկան, տների մեծ մասը հին ձեւ՝ գլխատներ են։ Բնակիչները ընթիւներ և մի քանի տուն գաղ-

<sup>1)</sup> Արձագանք 1895. № 5.

թականներ են Մշից և Փամբակից: Ընդամէնը՝ 130 տուն. 563 ար. 505 իգ. իմիասին՝ 1068 հոգի:

Բայց սովորական պարապմունքից, այս գիւղացիները զիտեն նաև անիւներ շինել, վայտ սղոցել և բրտութիւն անել: Ճնորհիւ մօտակալ կալուածատէր Խան-Աղեանի և ճեմարանաւարտ քահանալի գիւղացիները առել են երկրագործական եւրոպական գործիքներ:

Վարդարլուրից դէպի արևելք Կետեւան կալուածքում, որ հին գիւղատեղի է եղել, գտնուում է կալուածատէր Գէորգ Խան-Աղեանի գեղեցիկ և եւրոպական ճաշակով կահաւորուած տունը, որի առաջ տարածւում է ընդարձակ պարտէզը: Կալուածատէրը շերամ էլ է սկսել պահել, որ այս գաւառում առաջին և դրեթէ լաջող փորձն է: Մեղուապահութիւնը նոր, եւրոպական ձևում է: Կալուածատիրոջ որդին՝ Լեոնը՝ լայտնի է իւր հնարած ջուր բարձրացնելու մեքենայով և Շըկրագործական գործիքներ» խորագիրը կրող աշխատափրութիւնով:

Ս. Սարգիս ուխտատեղի.— Գտնուում է կորթան և Վարդարլուր գիւղերի միջև, համանուն լեռան գագաթին: Սամի փոքրիկ, հասարակ մատուռ է, մի դաւթով: Այս տարի Վարդարլուրի քահանայ Տէր Եղիա Զոհրաբեանի ջանքով վերանորոգուած է դաւթթը: Ս. Զալալեանի ասելով 1828 թուին այս մատուռը վերանորոգելիս՝ սեղանի տակը դտել էին Ս. Սարգսի մասը՝ արծաթի պահարանի մէջ և կրկին դրել նոյն սեղանի հիմքում: Այստեղ տարէնը երկու անդամ, Վարդավառին և Ս. Սարգսի տօնին, ահազին բազմութիւն ուի տ է զալիս: Արդիւնքը պատկանում է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցին

Լերան երեք կողմը ժայռոտ է, իսկ հարաւալին կողմտ մագւում է մի պարիսպ, ութէ կիսաւեր աշտարակներով: Այստեղ, Ս. Սարգսից դէպի արևմուտք կալ 18 $\frac{1}{2}$  արշ. երկարութեան, 4 $\frac{1}{2}$  ար. լայ. և այս չափ էլ բարձրութեան սրբատաշ քարերով մի շէնք, առանց պատուհանների, և նոյն խոկ անդուռն, եթէ արևմտեան պատի մէջի քանդուածքը դուռ չինի: Աւանդաբար առւում է, թէ սա շտեմարան է եղել, թէեւ կան կարծողներ, որ եկեղեցի լինի:

Սրա հարաւային պատի վրայ դրսից կայ հետևեալ արձանադրութիւնը.

ՆՂԹ թուականութեանս Հայոց ես Կորիկէ թագաւոր սահմցի ղհասոյթս վանուցն մեղաց թողութեան և արևշատութեան իմոյ ընդ ձեռամբ Աշոտ մարծպանին:

Հիւսիսային կողմի ժայռերի մէջ կան փոքրիկ քարալրեր:

Հորարձի. — Սադիբազդիլց մի վերսոտ հեռու, մի փոքրիկ դիւղ է, ունի մի քարաշէն, փայտածածկ եկեղեցի: Բնակիչները 50 տուն են. 240 ար. 205 իդ. իմիասին՝ 445 հոգի:

Գենառ-գեառ Հայոց. — Բաւական կանոնաւոր փողոցներով և նոր ձեւի տներով դիւղ է, մի ժայռոտ ըլլիք ստորոտում: Ունի մի քարաշէն, անդմբէթ եկեղեցի, որ այժմ վերանորոգութեան է կարօտում: Գիւղից փոքր ինչ հեռու գտնւում է բազմաթիւ, սառն աղբիւրներով հարուստ, անտառ: Տեղական ըերքերից գոլուած է կարտոֆիլը և մասամբ ցորենը:

Բնակիչները բացի սովորական պարապմունքներից, պարապում են նաև անիւներ և այէն տնակի սալլեր շինելով և սալլապանութեամբ: Ընդամէնը՝ 140 տուն են. 700 ար. 620 իդ. իմիասին՝ 1320 հոգի:

### ԶՈԼԱ-ՕՂԼԻՒ ՀԱՍՑՐԱԿՈՒԹԻՒՆ

Զալալ-օղլի. — Յայտնի չէ, թէ երբ և ով է հիմնել այս դիւղը, միայն ձորի զլիխին մի խաչ կայ, վրան դրած. Շկանզենցաւ խաչս ՚ի Զալալայ իշխանէն, որից հաւանականօրէն կարելի է ենթադրել, որ այդ իշխանի որդու բնակալայրն է եղած այս:

Զալալ-օղլին զտնւում է Գերեղայ-դեսի անդնդախոր ձորակի աջ ափին տարածուող այն ահազին հարթութեան վրայ, որ զնում հասնում է մինչեւ Հնէվանի ձորը: Այս հարթութեան արևմտեան կողմը 6-7 վերսոտ հեռաւորութեան վրայ երեւում է Գուալի կիսամերկ, բայց դեղեցիկ շղթան, որից մի քանի ճիւղեր զանազան ուղղութեամբ ձգուելով դէսլի Զալալ-օղլին կադմում են անտառապատ ըլուրներ և դեղեցիկ հովիտներ: Սրանց մէջ բղխող ականակիտ առուները միանում են բնութեան

և տեսարանի դեղեցկութեան հետ, զրօսասէր մարդկանց դէպի իրենց ձգելու։ Այսպիսի են Մատուռի ձորը, Որան-Լորին՝ Դադելավանանց աղբաւրի անժահական ջրով, Տէր Ռւհանանց գոմերի ձորն՝ իւր զետակով, Կոնդի-լանջը, Բայրաթիարա՞ դաշտն իւր ջրովէժով, Լոռու բերդի առաջը, բերդի երկու կողմի ձորերը և այլն։ Երկրորդական բարձրութիւնները Դուալի առաջով կիսաշրջան կազմելով դէպի հարաւ' տեղի են տալիս մի մեծ, զեղեցիկ, անտառապատ բլրի։ Սրան հայերը Զալակաղնուտ են առում, իսկ ոռունեցը՝ Արծանար (Медвѣжья гора). Ջատ չքնաղ տեսարան է բացում այս Զալակաղնուտի դաղաթից դէպի Դուալը և նրա հոլիսը դիտողի առջն։<sup>1)</sup> Գետի ձախ ափից Յ-4 վերսու հոռու Լալվար լեռու հարաւից հիւսիս ձգուելով կանդ է առնում Զալակողու առաջ, բաւական տարածութիւն թողնելով մի բլրի և ծաղկաւէտ հոլիտի համար, որ հիւսիսից եղբարփակւում է Արգաղոլու՝ բարձրութիւններով, որ Լոռու բերդի արևելեան ձորով Դեբեղին է խառնուում. իւր այս զեղեցիկ տեսարանների հետ բարեխառն կլիմայ ունենալով, Զալալ-օղլին կարող է լաւ ամարանց դառնալ, եթէ որ կառքի ճանապահ շինեն մինչեւ Սանահնի կայարանը, ինչպէս մտադիր են։ Գիւղը բաժանուած է Հայկական և ոռուսկան մասերի, իսկ առաջինը՝ երկու թաղի՝ վերին և ներքին։ Բաւական կանոնաւոր և լայն փողոցներ կտրուելով ծուռն ու մուռ անցքերով, միանում են այն տեղում, ուր նորերս շինուած է քաղաքային արդին։ Վերի թաղում, քարափի գլխին՝ բարձրանում է ո. Աստուծածնի սրբատաշ քարից շինուած եկեղեցին, իսկ գիւղի մէջ տեղում տեղաւորուած է ոռուսաց զինուորական եկեղեցին։

Տները նոր ձեւի են, մի քանիսն էլ երկարկանի, պարագնելով զարդարուած։ Բոլորի կտուքները կարմիր կղմինտըներով ծածկուած լինելով ամրող զիւղը կարմիր է երեւում և ոռուները երբեմն «կարմիր քաղաք» են անուանում նրան։ Գիւղում կան բաւականաչափ խանութներ, արհեստաւորների կրապակներ և մանաւանդ զինուորական եկեղեցին։

<sup>1)</sup> Աղապեան. Թրիքլիսից Քաղալ-օղլի. Նոր.-Դար՝ 1892 № 108.

Արտեղ են ընակւում Լոռու ոստիկանական շրջանի տատիկանապետը և քննչը. ամառը այստեղ են տեղափոխվում Հուլավէրից գաւառապետը, հաշտաբար դատաւորը, իրենց հիմնարկութիւններով: Ելստեղ կայ փոստառուն, հեռազբառուն և դեղատուն:

Բնակիչները զլինաւորապէս պարապում են առևտրով, արհետներով, անասնապահութեամբ և մասամբ երկրագործութեամբ: Ընդամէնը 255 տուն են, 890 ար. 796 իդ. ի միամին՝ 1686 հոդի:

Քալարօղլուց դէպի Եղիտանք լունական զիւղը տանող ճանապարհի երկու կողմում, վերջին զիւղից կէս վերստ հեռու կայ մի մեծ հանգուտարան, ուր կան ըաւական թուով խաչարձաններ: Արանց տապանագբերը մեծ մասամբ եղծուած են, միայն մինի վրայ կարգացւաւ է, «Դրիգոր ամիրայ Մամիկոննան»<sup>1)</sup>:

### ԵԿԱՑԵՐԻՆԵՆՖԵԼԴԻ ՌՍՑԱՆ

#### ՔՎԵՃԻ ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆ

Բոլնիս — յուաշէն. — Տարածւում է Բոլնիս-դետսկի ձախ կողմը, մօտ  $\frac{1}{2}$  վերստ հեռու, խաչենայ քերծ քարաժայռի ստորոտում, մի հովտի մէջ: Փողոցներն անկանոն են, տներից շատերը նոր ձևի, շատերը նոյն խոկ երկյարկանի: Գիւղում կայ մի հասարակ, փալտածածկ եկեղեցի և երեք կիսաւեր մատուռներ, որոնցից մինի անունն է Ս. Աստուածածին, միւսինը՝ Ս. Շգնաւոր, խոկ երրորդը, որ զտնուում է զիւղի միակ աղբիւրի մօտ և սաստիկ փոքր է՝ անուն չունի: Արև եկեղեցու աւերակ էլ կայ զիւղի կենտրոնում: Ֆխական եկեղեցու մօտ կայ պետական միդասեան գպրոց:

Բնակիչները Մելիք Արով Մելիք-Բեկլարեանի առաջնորդութեամբ եկան խաչէնցիներ են, ուստի և զիւղը իրենց ընակավայրի անունով Բոլնիս - խաչէն են կոչել: Արանք պահել են իրենց բարբառը, սովորութիւնները, միայն զերծ չեն մնացել տեղական-վրացական ազդեցութիւնից, այսպէս՝ կանալք բո-

<sup>1)</sup> Երձագանք. 1895 Ն: 14.

լորն էլ վրացնակ են հագնւում և դլուխ կապում, լեզուի մէջ ողառահում են վրաց խօսքեր, գործիքները, սայլը վրացականի նման են: Բայց վերջին ժամանակներս սրանք աւելի ենթարկուել են մօտակայ Եկատերինէն վելդ դերմանական զաղութի աղղեցութեան և սկսել են նրանց նման տներ շինել, արգեպանութեամբ և գենեգործութեամբ պարապել, ֆուրդոններ պահել և ալլն:

Ընդամէնը՝ 108 տուն են. 360 ար. 307 իդ. իմբասին՝ 667 հողի:

Գիւղի միայն նստուածքն է արքունական, իսկ շրջակալ հողերը կալուածատիրական են. զիլաւոր բերքը՝ խաղողն է, որից տարեկան ստացում է 50,000 թունդուց աւելի զինի:

Գիւղի շրջականերում կան Սիօն և Ֆուղրուղաշէն վրաց վանքերը<sup>2)</sup>, երկու վերստ հեռու մի փոքրիկ եկեղեցի, ուուրբ Կամակատար անունով, որին ամէն տարի Համբարձման օրը զիւղացիները ուխտ են դնում, մատաղներ անում, և իրենց արգիների և արտերի համար կարկտից ու մկից պաշտպանութիւն հայցում:

Երեք վերստ հեռու, ըլլի ստորոտում, գտնում է սրբատաշ մի եկեղեցի, որ տևղացիներից Նախշուն վանք է կոչւում:

Այստեղ նշանաւոր է նաև Մելիք-Արուիի արխու, որ անցնում է զիւղի առաջից, սկիզբն առնելով մի վերստ հեռու ծանշեանների կալուածքից և թափում Մաշաւեր գետը Ղոզը լամ համեմատ ճապալա թրքաբնակ գիւղի մօտ, ուողելով ինչպէս խաչենցիների, այնպէս և շրջակայ թուրքերի և վրացիների արգիները:

Այս գիւղիցն է մեր մանկավարժական ասպարիդում լայտնի պ. Ղազարոս Աղայեանը:

Փ. Բոյնիս կամ Խատիս-Սոփելի. — Մի փոքրիկ զիւղ է, տարածուած մի քանի բլուրների լանջին, և նշանաւոր է նրանով, որ սրա մօտ գտնուած է շինութեամբ փոքր, բայց հռչակով մեծ, Ա. Քէորդ ուխտատեղին: Սա մի բարձր բլրի լանջին կառ ուցուած փոքրիկ, անսիւն և անխորան մատու. է, մի փոքրիկ կաթողի-

<sup>2)</sup> Տես նշ. վանքերի բաժնում.

կէով: Երկարութիւնն է 10 արշ. լայն. 6 արշ. իսկ բարձր. մոտ 3 սաժէն. Երևելեան պատին կլց, դրսից կանգնեցրած է մի խաչ, ուր ուխտ են գալիս այն ուխտաւորները, որոնք թէեցանկանում են, բայց չեն կարողանում բարձրանալ մօտակայ Եալիբարա լիռան զադաթը Ս. Գէորգ ուխտատեղին համբուրելու:

Մատուռը արտաքուստ սպիտակացրած է: Մօտը երկու շարքով շինուած են 38 հատ սենեակներ, ուխտաւորների համար: Սրանք շինել են իրենք ուխտաւորները և նուիրել մատուռին: Մատուռը պահպանում են երկու պահպաններ և Բոլնիս-Խաչէնի քահանան: Ըմէն տարի, նոյեմբերի 10-ին անշափ բազ Խոթիւն ուխտ է զալիս այստեղ: Սրդիւնքը առաջ պատկանում էր Թիֆլիսի Ներսիսիան դպրոցին, իսկ այժմ էջմիածնի Ճեմարանին:

Ս. Գէորգ մատուռի լերան ստորոտում կայ մի աւերակ եկեղեցի, իսկ զիւղի մէջ մի փոքրիկ, կղմինտրածածկ, նորակառուց վրաց եկեղեցի: Բնակիչները վիրախօս հայեր և վրացիներ են, ընդամէնը՝ 30 տուն, 106 ար. 97 իդ. իմիասին՝ 203 հոգի. որից հայերը միայն 3 տուն են, 9 ար. 8 ար. ի միասին՝ 17 հոգի: Տանուտէրը հայ է, որ խօսում է հայերէն, վրացերէն, թուրքերէն, ռուսերէն և գերմաներէն:

Քվէշ.—Ընդարձակ դաշտի մէջ բարձրանում է մի բոլորակ բլուր, որի վրայ եղել է մի փոքրիկ բերդ, մէջը Ս. Սարգիս անուն մի մատուռ: Սրանք այժմ բոլորովին աւեր են: Այժմեան գիւղը տեղաւորուած է այդ բլբի լանջին. այստեղ էլ հայերը ունին մի հին, քարաշէն եկեղեցի, Ս. Առուածածնի անունով: Սրան առաջ կայ մի խաչ քար, որի վրայ զբուած է. Խաչս կանգնեցաւ թ. ՊԶԳ<sup>\*</sup>): Առաջներն այստեղ բաւականաչափ հայեր են եղել, միայն օդի և ջրի վատութեան պատճառով մի մասը մեռել է, միւրը գաղթել Բոլնիս դիւղը: Գիւղս պատկանում է վրացի Օրբելեան և Ղափլանով իշխաններին: Բնակիչները վրացի և վիրախօս հայեր են. 28 տուն. 101 ար. 99 իդ. որից միայն 2 տուն հայեր են, 6 ար. 5 իդ. իմիասին 11 հոգի:

<sup>\*</sup>) 1434

Տարախմելա կամ Դորուրէտի. — Գտնւում է մի բլրի լանջին, որի ստորոտով հսում է Մաշաւեր գետը: Արա ձորում կան մի քանի աղբեր, որոնցից մինչ առաջ մի պատ է քաշած և մի պատուհանի տեղ թողած: Ինչպէս ասում են, այս աղբերը երբեմն իրը բնակարան են ծառալիլ: Գիւղում կայ մի հայոց և մի վրաց հասարակ եկեղեցի: Բոլոր տները կիսազետնափոր են, հինգնեւի: Գիւղը պատկանում է իշխան Գաւիթ Քորուլովին, որի բաւական զեղեցիկ տունը գտնւում է գիւղի ծայրում և բատկացրուած է կառավարչին: Գիւղացիները դըժդոհութիւն էին յայտնում կառավարչից, որ մի գեսեատին վարելահողի համար բերքի մի քառորդը վերցնելուց զատ, երեք երեք բուրյի էլ փող է առնում: Բնակիչները վիրախօս հայեր և վրացիներ են. ընդամէնը՝ 150 տուն. 167 ար. 154 իգ. իմիասին՝ 321 հոգի:

Գորուրէտի գիւղի հանդէպ, Մաշաւեր գետի ձախ կողմում ընկնում է Ավալշէնի գիւղատեղին, ուր կան մի հայոց և մի վրաց աւեր եկեղեցի: Սրանից փոքր ինչ հեռու գտնւում է Զաւդամ գիւղատեղին, մի հայոց եկեղեցիով: Խոկ գետի աջ կողմում, մի բլրի վրայ բարձրանում է Գաւիթ Սաղարեղժօ անունով վրաց աւերակ եկեղեցին, որի ներքև գտնւում է մի գիւղատեղի, աղբիւր և ջրի արիս:

Փոքր Ռատեւան. — Գտնւում է Մեծ Ռատեւան կամ Եկատերինէնֆելդ գաղութից երկու վերստ հեռու, Ճապալ գետի ձախ ափին: Այստեղ կայ մի հոյակապ, քարաշէն եկեղեցի, որ կառուցել է նախկին կալուածատէր պ. Փիթոյեանը: Այժմ գիւղը պատկանում է պ. Ա. Մանեթաշեանին: Բնակիչները վիրախօս հայեր և վրացիներ են. ընդամէնը՝ 30 տուն. հինգ ար. 78 իգ. իմիասին՝ 173 հոգի՝ որից հայերը 8 տուն. 30 ար. 25 իգ. իմիասին 55 հոգի են:

Կիանէթ. — Մի փոքրիկ գիւղ է, մի բլրի վրայ տեղաւորուած: Ունի տաշած քարից շինուած մի եկեղեցի Ս. Գրիգոր անունով: Բնակիչները Հաղբատից դաղթած հայեր են: 19 տուն. 60 ար. 59 իգ. իմիասին՝ 119 հոգի:

Գիւղս կալուածք է իշխան Բարաթովի:

### ԴՈՒՄԸՆԻՍԻ ՀԵՍԵՐԸԿՈՒԹԻՒՆ

**Մեծ-Դումանիս.**— Ընկնում է Մաշաւեր դետի ձախ կողմի բարձրաւանդակի վրայ, ունի մի հայոց, փայտածածկ անշուք եկեղեցի, ուր կայ Վենաց փայտի մատունք, և մի վրաց եկեղեցի, որ Հայոց նախկին թեկինամ կամ Ա. Սարգիս եկեղեցին է եղել։ Տները կիսագետնափոր են և միայն չորսը նոր ձեր։ Օդը և ջուրը սքանչելի են։ Բնակիչները վիրախօս հայեր և վրացիներ են։ ընդամէնք՝ 42 տուն. 203 ար. 181 իդ. իմիսախն՝ 384 հոգի. որից հայերը 166 ար. 125 իդ. իմիսախն՝ 288 հոգի են։ Հայերի մի մասը զաղթել է Ղարաբաղից Ազա-Մահմատ խանի արշաւանքի ժամանակ, իսկ մէւս մասը՝ Զաւախքից։ Առաջինների սերունդից մի քանիսը զիտեն հայերէն։ Գիւղն այժմ պատկանում է Ա. Մանթաշեանին։

**Փ. Դումանիս.**— Հռչակաւոր համանուն ամբողի մօտ, մի հարթութեան վրայ փռուած փոքրիկ, աննշան զիւլ է։ Բնակիչները վիրախօս հայեր են. 15 տուն. 55 ար. 39 իդ. իմիսախն՝ 94 հոգի։

**Գ. որնչութ.**— Գտնում է մի բարձրաւանդակի վրայ, որի հիւսիսային և արևեմտեան կողմը խոր ձորեր են, որոնց միջակ հոսում է Մաշաւեր դետը։ Հարաւային կողմը բարձրանում են անտառապատ, անանուն լեռներ, որոնք ձորի հետ միասին բաւական գեղեցիկ տեսք են պարզեւում զիւղին։ Այստեղ կայ կոփածոյ քարերից շինած, անտիւն, թաղակառ մի եկեղեցի, մի փոքրիկ գմբէթ-գանդակատնախ։ Արա շուրջը կայ մի ահազին գերեզմանատուն։ Դիրդում կան մի քանի կանոնաւոր փողոց, բայց ոչ մի նոր ձեւի տուն, այլ բոլորն էլ կիսադեսնափոր, բաղկացած մի սենեակից, մի դաւթից և մի զոմից։ Անհեակի պատի մէջ տեղը կայ մի օճախ, որի երկու կողմը լայն տախտեր են դրուած, իսկ կտրում մի փոքրիկ պատուհան է բացւում. գաւիթը փայտածածկ է լինում, ուր սովորաբար դրունում են հացի շտեմարանը, գինի մրգելու շանը (տակառ)։ Դոմում շատ անդամ լինում է և մի բաժանմունք «օգա», ձմեռը մարդկանց բնակութեան յատկացրած։ Գիւղը պատկա-

նում է Ա. Մանթաշեանին։ Բնակիչները լնիկ են, վիրախօս հայեր, ընդամենք՝ 38 տուն։ 162 ար. 125 իդ. իմիասին՝ 287 հոգի։ Արանց, շրջակալ վիրախօս զիւղերի հետ միասին, հովում է արև գիւղացի մի քահանայ։

Վարդիսուրան։—Մաշաւեր դետի ձախ ափին բարձրացող բարձրաւանդակի վրայ է գտնվում։ Տները կիսագետնափոր են և միայն երկուսը նոր ձեւի. կայ հայոց մի վոքրիկ, քարաշէն, անշուռք եկեղեցի։ Բնակիչները վիրախօս հայեր և վրացիներ են։ Ընդամենք՝ 25 տուն։ 89 ար. 73 իդ. իմիասին՝ 162 հոգի. որից հայերը 18 տուն են. 71 ար. 52 իդ. իմիասին՝ 123 հոգի։

Դիւղից հազիւ քառորդ վերստ հեռու, նոր բացած ճանապարհի մէջ և նրա շուրջը կան բաւական թուով գերեզմաններ, վեց քարաւախոտակներից բաղկացած։ Ուկորները դեռ ևս լիովին չեն փթել և բրոնզեալ կամ այլ իրեր, կաւէ ամաններ չկան, չնայելով որ ճանապարհի մէջ զտնուածները բացուած են։

## II. ԹՐԻԱԼԵԹԻ ՈՍՑԻԿԱՆԱԿԱՆ ՑՐՑԱՆ

ԱՐՍՄԼՈՒԻ ՀԱՍՈՐԸԿՈՒԹԻՒԻՆ

Տաշքենտ կամ Չիժու-քիլիսա եւ կոմմ Զինիս. — Ունին մի նորաշէն, փարտածածկ եկեղեցի։ Բնակիչները Էրզրումից են դադիւծած 1830 թուին Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ։ Ընդամենք՝ 23 տուն են. 122 ար. 105 իդ. ի միասին՝ 227 հոգի։

Աշխալա-Փուււան է ձորակի մէջ և ունի սրբատաշքարերից շինած մի եկեղեցի, փարտածածկ և առաստաղը նըսկարներով դարդարուած։ Բնակիչները դադիւծականներ են Էրզրումից։ Ընդամենք՝ 130 տուն են. 619 ար. 546 իդ. ի միասին՝ 1165 հոգի։

ՆԱՐԴԻՎԱՆԻ ՀԱՍՈՐԸԿՈՒԹԻՒԻՆ

Նարդիվան։—Կայ մի սրբատաշքարերից շինած թաղակապ, պարսպապատ եկեղեցի։ Բնակիչները Էրզրումից են

գաղթել. ընդամէնը՝ 165 տուն են. 331 ար. 322 իդ. իմիս-սին 653 հոդի:

Հուշաբարձրութեածի պատճեած գաղթել. — Խրամ գետի հանդէպ, զեղեցիկ դիրքով մի փոք-րիկ գիւղ է, որի քարաշէն, գեղեցիկ եկեղեցին, իւր զանգա-կատնով և պարսպով, ինչպէս և Խրամի վրայ ձգուած թա-ղակապ կամուրջը շինել են սոյն գիւղացի Մեհրաբեանները: Բացի վերոյիշեալ եկեղեցուց, այստեղ կայ նաև մի ուրիշ փոք-րիկ, քարաշէն եկեղեցի: Բնակիչները նոյնպէս կըզբումից են գաղթած. ընդամէնը 40 տուն են. 201 ար. 209 իդ. ի մի-ասին՝ 410 հոդի:

Այազմա. — Այազմա բառը յունարկն նշանակում է օրհ-նուած ջուր, և այս գիւղը այս անունն ստացել է այն աղ-բիւրից, որ բղխում է արևմտեան կողմը զտնուած փոքրիկ մա-տութիւ յատակից և իրը սուրբ պաշտում է Հայերից և շրջա-կայ յոյներից: Այս մատուռն այժմ ծառալում է գիւղացիներին երր ծխական եկեղեցի և վարդավառին բազմաթիւ ուխտա-ւորներ է ունենում շրջակայ հայերից և յոյներից: Դիւղը շատ զեղեցիկ դիրք ունի:

Բնակիչները կըզբումի գաւառից են գաղթած. ընդամէնը 35 տուն են. 170 ար. 160 իդ. ի միասին 330 հոդի:

Ղըզըլ-քիլիսա. — Ունին մի քարաշէն, թաղակապ եկեղեցի: Գիւղի մօտ է Վանիքածոր կոչուած ձորակը, ուր կայ մի սու-րակ մատուռ, ուր ուխտ են զալիս Համբարձման տօնին: Այս-տեղ բղխում են բազմաթիւ աղբիւրներ, որոնք միանալով մի վտակ են կազմում և թափում Խրամի մէջ: Բնակիչները կը-զբումի գիւղերից են. ընդամէնը՝ 80 տուն են. 356 ար. 320 իդ. ի միասին՝ 676 հոդի:

Ողնի կամ Յոնիա. — Մի բազմադիւր գիւղ է, որի ջրե-րը միանալով թափում են Խրամի մէջ: Ունի մի թաղակապ, պարսպապատ եկեղեցի: Բնակիչներն կըզբումի գաւառիցն են գաղթել. ընդամէնը 50 տուն են. 233 ար. 220 իդ. ի մի-ասին՝ 555 հոդի:

Բուռնաշէթ. — Ունին մի թաղակապ եկեղեցի, որի դռան ճակատին կայ յունարէն արձանադրութիւն: Բնակիչները կը-

զրումի դաղթականներ են. ընդամենը 31 տուն են. 155 ար. 127 իգ. ի միասին՝ 282 հողի:

*Տաշրաշի.* — Դժնուում է մի թերակղղիաձև բարձրաւանդակի վրայ, որի երեք կողմի խոր ձորերով անցնում է խրամ զետը: Ունին մի քարաշէն, թաղակապ եկեղեցի: Մի քիչ հեռու, ըլլի վրայ կայ մի հին, խաչաձև եկեղեցի, շուրջը հին գերեզմանատուն: Եկեղեցու վրայ կայ վրաց խուցուրի տառերով արձանադրութիւն. ընակիչները՝ 40 տուն են. 202 ար. 198 իգ. ի միասին՝ 400 հողի:

*Տամալա.* — Հայ բոշաների մի փոքրիկ, աննշան դիւղ է. եկեղեցի էլ չունին: Բնակիչները միմիայն հայ բոշաներ են, ընդամէնը՝ 12 տուն են. 67 ար. 40 իգ. ի միասին 107 հողի:

*Դարար/օյ* (2որագիւղ). — Ունի մի սրբատաշ քարերից շենուած, թաղակապ եկեղեցի. ընակիչները՝ 70 տուն են. 300 ար. 290 իգ. ի միասին՝ 590 հողի:

*Դապուր.* — Այստեղ նշանաւորը քարաշէն, փայտածածկ եկեղեցին է, որի առաստաղը պարոկական ճաշակով դեղանկարուած է: Բնակիչները՝ 32 տուն են. 163 ար. 137 իգ. ի միասին՝ 300 հողի:

*Խաշի գիւղ.* — Ունի մի քարաշէն և փայտածածկ եկեղեցի և մի քարաշէն մատուռ՝ ուխտատեղի: Բնակիչները 60 տուն են. 246 իգ. ի միասին 500 հողի:

### ՃՈՇԿԱՆԻ ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆՆ.

*Ծոճկան.* — Ծնող գիւղի մօտ. կալուածք Լօրիս Մելիքեանի և վրացի իշխան. Լևան Մելիքովի. ունի մի եկեղեցի: Բնակիչները՝ 70 տուն են. 392 ար. 277 իգ. ի միասին՝ 669 հողի:

Արա մօտ, հաղիւ 2—3 վերստ հեռու, դէպի արևմուտք, անտառի մէջ գտնուում է «Վարդան Նահատակի» մատուռը, որ պարսպապատ է եղել, միայն ալժմ կիսաւեր է:

Մօտը գտնուում է մի փոքրիկ լճակ, որ մօտ չորս սաժէն խորութիւն և 50 սաժէն շրջապատ ունի: Զուրը քարաժայ-

ուրից թափուելով՝ գեղեցիկ ջրվէժ է կազմում։ Այստեղ այէն տարի Զատկին, մասամբ էլ Վարդանանց տօնին ուխտ են դալլս շրջակայ զիւղերից։

Այստեղից մի քանի վերստ հեռու դէպի Հաղբատ բարձրանում է մի բարձր ժայռ, որ տեղացիներից կուլում է Լանկ-թամուրի քար։ Աւանդաբար պատմում են, թէ Լանկթամուրը դէպի Ախտալա արշաւելիս՝ մի քանի օր այդտեղ բանակ է զրել։

**Չանաղչի.** — Կոմս Լօրիս-Մելլքեանների կալուածքն է, խիտ անտառով պատած։ ունի մի փայտածածկ Եկեղեցի և մի քանի կիսաւեր, աննշան մատուռներ։ Բնակիչները 36 տուն են։ 168 ար. 141 իգ. ի միասին՝ 308 հողի։

**Խոխմէլ.** — Մի փոքրիկ գիւղ է, Չանաղչից 4 վերստ հեռու։ Ունի մի փոքրիկ, քարաշէն եկեղեցի բլրի վրար։ Բնակիչները՝ 13 տուն են։ 70 ար. 51 իգ. ի միասին՝ 121 հողի։

**Աերդածոր.** — Մի փոքրիկ գիւղ է, անտառապատ։ Հին աւերակներից երեսում է, որ բաւական ընդարձակ է եղած։ Այստեղ կայ մի «Բարձրեալ» անունով խաչքար, որ 11 արշին բարձրութիւն ունի<sup>1)</sup>։ Բնակիչները 12 տուն են, 78 ար. 66 իգ. ի միասին՝ 144 հողի։

**Դիւլիբառ.** — Փոքրիկ գիւղ է, մի անշուք եկեղեցիով։ Գիւղի աջ կողմից հասում է Բանսշ գետակը, որին գիւղից մի վերստ ներքեւ խառնում է Ֆոփայ-ջուր կոչուած վտակը։ որա ափին գտնուում է Ֆոփի զիւղատեղու աւերակները, մի փոքրիկ, քարաշէն եկեղեցիով։ Բնակիչները 11 տուն են, 51 ար. 40 իգ. ի միասին՝ 91 հողի։

### ՃՆՈՂԻ ՀԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ

**Շնող.** — Դանւում է երկաթուղու Ախտալա կայսրանից դէպի արևելք, մօտ Հինչ վերստ հեռու, խոր ձորի զլինին, Գուղովթ, Հին Պարաքեօթուկ, Մեծ և Փոքր Գեօդղաշ և Զեկա-

<sup>1)</sup> Քաղաք, ճան. Ը, եր. 52.

տար լեռների փեշերից կազմուած գողածնեւ տարածութեան վերաբ: Դիւղը բաղկացած է երկու մասից. Բերդատեղից, ուր երբեմն զտնում էր կայծոն կամ Ամանակ ամբողջը և Նորաշենից: Երս երկու մասերը բաժանում են միմեանցից մի ձորով, որ ձգում է արևելքից՝ արևմուտք և որի միջով հոսում է մի փոքրիկ առուակ: Կայծոն բերդատեղին երեք կողմից պատած է խոր ձորերով, որոնց միջով հոսում են ջնողաջուր, Գերեղ և մի անանուն վտակ: Նորաշենը բերդի հանդէպ է, հարաւային սարալանջում, և աւելի ցածր դիրք ունի: Երկու թաղումն էլ կան մի մի սազաշեն, սրբատաշ քարից շինուած եկեղեցի: Տըների մեծ մասը գլխատուն է, մնացածը նոր ձևի կղմինտրածածկ բնակարաններ: Բոլոր ձօրերը պատած են ալգիներով:

Բնակիչները բնիկներ են, մի քանի տուն էլ Ղարաբաղից գաղղթականներ: Ընդամէնը՝ 270 տուն են. 1150 ար. 1067 իդ. ի միասին՝ 2217 հոգի: Բացի սովորական պարապմունքներից, այս զիւղացիները պարապում են նաև ծխախոտի մշակութեամբ: Ջրջակայ զիւղացիները սրանց կրչում են թերո և չորոս, այստեղացի այն ելկու գաւռազիտունների անունով, որոնք իմաստունի հռչակով ամենամեծ լիմարներն են եղել<sup>1)</sup>:

Ջնողի շրջակայքում կան հետևեալ ուշադրութեան արժանի տեղերը. ա). Բոլվեր. — զտնուում է ջնողից դէպի հարաւ, մօտ չափ վերստ հեռու, Սեղուի վանքից դէպի արևելք: Սա. մի հին զիւղատեղի է, ուր կայ մի եկեղեցի և բաւական ընդարձակ գերեզմանատուն: Սրբուղ կան շատ ալբեր, որոնք վորուած են երկաթ համելու համար: Հէնց ալժմ էլ նկատելի է երկաթափայլի (շելէզոյն блеск) հանք. երկաթաջրի մի աղբիւր էլ բաւական առատութեամբ բղխում է: Նկատելի են նաև երկաթ համելու տեղերը՝ բովերը, որի պատճառով և հաւանականօրէն՝ զիւղն էլ կոչուել է Բոլվեր:

Սրանից բաւական ցածր զտնուում է մի կիսաւեր մասուա, որ կոչում է Շինու Սարիաւազի մասուու և իւր շուրջն ունի զերեզմանատուն:

<sup>1)</sup> Տես Ժողովրդական առակների բաժնում.

բ). Մանուտեւ.— Ճնողից մօտ 4 վերստ հեռու, դէպի հարաւ, Բոլիբրից արևելք, 2եկատար լերան ստորոտում, ձորի մէջ: Սաղաշէն, սրբատաշ քարերից շինած մի եկեղեցի է, որի շուրջը կան լցուրի տեղեր և գերեզմաններ:

Սրանից դէպի հեւսիս, հազլւ երեք վերստ հեռու գտնւում է Թմնղուտի եկեղեցին, որ նոյնական սագաշէն է և կիսաւեր: Արա շուրջը կալ և գերեզմանատուն:

գ). Ս. Սարգիս եւ Ս. Նշան մատուռներ, որ գտնւում են Ճնողի հանդէպ, լեռան լանջին, միմեանցից մօտ քսան սաժէն հեռաւրութեամբ: Ս. Նշանը պարսպապատ է և կիսամբ, իսկ Ս Սարգիսը դեռ ևս կանգուն է, որ և երբեմն պատարագ է մատուցւում:

Արծէշ.— Գտնւում է Ճնողից երկու վերստ հեռու, դէպի արևելք, Կողմանայ լերան լանջին: Գիւղում կայ մի եկեղեցի, բնակիչները 60 տուն են. 270 ար. 251 իդ. իմիասին՝ 522 հոգի: Այս գիւղի սահմանում, Կողմանայ լերան մօտ, գտնւում են երկաթաքարեր և սրանց հակերու հին բովիր (քուրաններ):

Շալա կամ Աշխածոր կամ Լկածոր.— Գտնւում է Շոճկանից փոքր ինչ հեռու, ձորալանջի վրայ: Այ մօտ ժամանակներս է Հիմնուել մի հին գիւղատեղում: Բնակիչները դադթել են մօտակալ Շալի գիւղից, որ պատկանում է Թուրք Եղիգարով կալուածատէրին: Ընդամէնը՝ 13 տուն են. 80 ար. 51 իդ. իմիասին՝ 331 հոգի:

Ախրեօրփու.— Գտնւում է համանուն կամ Շապալ վտակի ափին, որ իջնում է Լալվար լեռան ստորոտից: Այս վրտակը հանքային նիւթեր պարունակելով այնքան առողջարար չէ, բայց պարզեւում է բնակիչներին կարմրախալու ձկներ: Գիւղը շրջապատուած է անտաներով և շատ մաքուր օդ ունի: Գիւղում կայ մի անշուք, քարաշէն եկեղեցի: Բնակիչները շատ քաջ են և աշխատասէր, ընդամէնը՝ 60 տուն են, 165 ար. 175 իդ. իմիասին՝ 340 հոգի:

Այս գիւղից հաջիւ չորս վերստ հեռաւրութեամբ. Լալվար լերան գրեթէ ստորոտում, մի անտառապատ խոր ձորի մէջ, գտնւում է մի զեղեցիկ եկեղեցի, չորս սրբատաշ քարերից շի-

նած սիւներով, որոնց վրայ բաձրանում է կաթուղիկէն, նրաքանդակ նկարներով եղբափակուած պատուհաններով։ Նոյնպիսի քանդակներ զարդարում են նաև գռների և միւս լուսամուտների շուրջը։ Սեղանի երկու կողմը կան մի մի խորան, որոնցից ձախակողմիանի մէջ մի անցք հանում է տանիքը։ Արևմտեան դրան առաջ բարձրանում է մի թաղակապ զաւիթ։ Հիւսիսային կողմը, վոքքը ինչ հեռու կան երկու փոքրիկ մատուռների աւերակներ։ Ամբողջը պատած է եղիլ պարոպով, որի մէջ կայ նաև մի հանգստարան։

Թէ եկեղեցու և թէ մատուռների վրայ չլայ արձանադրութիւն։

Խոշորնի, — Տարածւում է մի անսամւապատ լեռնակողի վրայ և պատկանում է վրացի իշխան Լևան Մելիքովին։ Բնակիչները հայեր են և բոյներ։ Հայերը զիւղի մէջ եկեղեցի չունին, այլ օգտուամ են զիւղից վոքքը ինչ հեռու զանուած զիւղատեղու հին եկեղեցուց, իսկ բոյները՝ ունին։ Այս զիւղատեղու եկեղեցու արևմտեան դրան վերև կայ հետեւեալ թուականը՝ թվ. 20<sup>1)</sup>։ Բնակիչներից հայերը 30 տուն են, 101 ար. 82 իգ. իմիասին՝ 183 հոգի։

Դուդո. Մի փոքրիկ, անհշան զիւղ է Աղքեօրփու մօտ 2 տուն հայ բնակիչներով։ 15 ար. 9 իգ. իմիասին 24 հոգի։

Դարպաս. Ճուլավէրից 19 վերստ հեռու, փոքրիկ, անհշան զիւղ, առանց եկեղեցու։ բնակիչները 5 տուն են, 30 ար. 19 իգ. իմիասին՝ 49 հոգի։